

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՄՆ-ՈՒՄ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումից անցել է ավելի քան մեկ տարի: Մշակվում և կյանքի են կոչվում քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտների իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրության կարևորագույն ակտեր: Բուռն թափով շարունակվում է կառուցվածքային և ենթակառուցվածքային փոփոխությունների իրականացման գործընթացը: Հիմնականում ձևավորվել է իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների գործունեությունը կանոնավորող իրավական դաշտը:

Իր ձևավորման հերթում է գտնվում պետական իշխանության երրորդ հենասյունը՝ դատական իշխանությունը, որի գոյությունը, ամրությունը և հզորությունը նույնքան կարևոր են, որքան և ժողովրդավարության և ի վերջո՝ պետության գոյությունը ընդհանրապես:

Մշակվել և գործողության մեջ է դրվել Հայաստանի Հանրապետության դատախազական բարեփոխման հայեցակարգը: Ակտիվ և շահագրգիռ քննարկումներ են ընթանում հանրապետության դատական ապագա համակարգի, դրա ձևավորման սկզբունքների, այդ համակարգի գործունեությունն ապահովող օրենսդրության և դրա զարգացման հարցերի շուրջ: Ուստի, կարծում ենք ուսանելի և օգտակար կլինեն այդ համակարգի ստեղծման և զարգացման միջազգային փորձի ուսումնասիրումը:

Առաջարկում ենք ԱՄՆ-ի, որպես ժողովրդավարական առաջին երկրի օրինակը, որտեղ կառուցված է իր կայունությամբ ու հզորությամբ աննախադեպ դատական համակարգ: Փորձենք սկսել այդ համակարգի կազմավորման առանձնահատկությունների ուսումնասիրությունից:



ՀՐԱՆՆԱԶԱՐՅԱՆ

ՀՀ Սահմանադրական դատարանի անդամ

ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երբ Ֆիլադելֆիայում 1787 թվականին հրավիրված Սահմանադիր ժողովի թվով 55 պատվիրակներ հավաքվեցին՝ ստեղծելու ավելի կատարյալ Միություն, կերտելու Միացյալ Նահանգների Սահմանադրությունը, նրանք համոզված էին, որ պետական իշխանությունը երեք ճյուղի տարանջատելը առավելագույնս կծառնի ժողովրդավարության գաղափարի կենսագործմանը: Այդ խնդրին է անդրադարձել դեռևս Արիստոտելը իր «Բաղաքականություն և բարոյագիտություն» աշխատությունում՝ գրված ավելի քան երկու հազարամյակ առաջ: Ծաղկման տարիներին իր 1748թ. «Օրենքների ոգու շուրջը» հանրագիտական երկում հիմնավորում էր այն տեսակետը, որ ազատություն լինել չի կարող, քանի դեռ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունները տարանջատված չեն: Օրենսդիր իշխանությամբ օժտված դատավորը, ըստ Մոնտեսքյոյի, կարող է վերածվել բռնապետի, իսկ գործադիր իշխանություն ունենալու դեպքում՝ կեղեքիչի: Ջոն Լեյքը, Միացյալ Նահանգների գերագույն դատարանի առաջին նախագահը (պաշտոնավարել է 1789-1795թթ.), առավել քան համոզված էր, որ իշխանությունների երեք ճյուղերը պետք է առհավետ տարանջատված լինեն և հսկեն միմյանց:

Առավել վիճելի է եղել այն հարցը, թե ինչպիսի լիազորություններ պետք է ունենա իշխանության դատական թևը և ինչպես պետք է դրանք գործադրվեն: Սա էլ այն գլխավոր հարցերից մեկը, որն

այդքան մտահոգում էր ԱՄՆ Սահմանադրության հիմնադիրներին: Չնայած թվով 6 մահանգներում իշխանության օրենսդիր և գործադիր թևերին զուգահեռ ստեղծվել էին նաև դատական իշխանության մարմիններ, այնուամենայնիվ, Ֆիլադելֆիայի Սահմանադիր ժողովի պատվիրակները, չունենալով ֆեդերալ մակարդակի դատական մարմնի գոյության որևէ նախադեպ, հայտնվել էին դժվարին կացության առջև: Խնդիրն այն էր, որ Կոնգրեսում չափից ավելի իշխանություն չկենտրոնացվեր: Ոմանք այն կարծիքին էին, որ իշխանության դատական թևը, ի հակակշիռ օրենսդիր իշխանությանը, պետք է վետոյի իրավունք ունենա: Սակայն արդյունքում դատական իշխանությանը շնորհվեցին չափազանց սահմանափակ լիազորություններ, որոնք իրենց արտացոլումը գտան ԱՄՆ Սահմանադրության 3-րդ հոդվածում, այն է. «Միացյալ Նահանգների դատական իշխանությունը տրվում է միայն մեկ՝ Գերագույն դատարանին և այն ստորադաս դատարաններին, որոնք Կոնգրեսը ժամանակ առ ժամանակ կարող է սահմանել և գործադրել»: Սահմանադրության 3-րդ հոդվածի երկրորդ բաժնում թվարկվեցին իշխանության դատական թևի հիմնական լիազորությունները: Սահմանվեց նաև, որ թե՛ Գերագույն դատարանի և թե՛ ստորադաս դատարանների դատավորները պետք է պաշտոնավարեն այնքան ժամանակ, քանի դեռ նրանց վարքն անբասիր է, և սահմանված ժամկետներում իրենց ծառայության դիմաց պետք է ստանան հատուցում, որը չպետք է նվազի պաշտոնավարության ընթացքում:

Այսպիսով, երկար որոնում-

ներից ու մտորումներից հետո, 1787 թվականին սահմանադրուն լուծվեց դատական իշխանություն ստեղծելու հիմնահարցը, որը և ուղեցույց հանդիսացավ ԱՄՆ-ի Կոնգրեսի համար՝ 1789 թվականին իր իսկ անդրանիկ աստաշրջանում ընդունելու թվով առաջին օրինագիծը՝ Դատական ակտը, որը Նախագահ Ջորջ Վաշինգտոնի կողմից ստորագրվեց 1789 թվականի սեպտեմբերի 24-ին:

Հետաքրքրականն այն էր, որ ի կատարումն Կոնգրեսի պատվիրանների (ակտի 4-րդ բաժին), օկրուգային յուրաքանչյուր դատարան կազմված էր ԱՄՆ-ի գերագույն դատարանի երկու անդամներից և ֆեդերալ շրջանային մեկ դատավորից, որոնք ըստ էության իրականացնում էին օկրուգային դատավորների գործառույթներ:

Օկրուգային դատարանի նիստը իրավագոր էր հիշյալ դատավորներից առնվազն երկուսի մասնակցության դեպքում: ԱՄՆ ֆեդերալ դատական համակարգի ձևավորման վաղ շրջանում Գերագույն դատարանի անդամների և ֆեդերալ շրջանային դատավորների գործառույթների այդպիսի համատեղումը գնահատվում էր որպես խիստ օգտակար և արդյունավետ: Այն շարունակվեց ընդհուպ մինչև 1891 թվականը, երբ ԱՄՆ Կոնգրեսը ընդունեց հերթական դատական ակտը:

1789 թվականի Դատական ակտի համաձայն, Գերագույն դատարանը կազմված էր դատարանի նախագահից և դատարանի թվով հինգ անդամից (ներկայումս Գերագույն դատարանը կազմված է 9 անդամից): Սահմանվեցին նաև Գերագույն դատարանի գործունե-

ության կազմակերպման ընդհանուր սկզբունքները:

Թերևս ամենակարևոր լիազորությունը, որը Դատական ակտով շնորհվեց Գերագույն դատարանին, այն էր, որ նրան իրավունք վերապահվեց վերացնել նահանգային դատարանների այն որոշումները, որոնք իր իսկ կողմից հակասահմանադրական կճանաչվեն (ակտի 13-րդ բաժին, որը մասամբ հակասահմանադրական ճանաչվեց ԱՄՆ գերագույն դատարանի 1803թ. փետրվարի 24-ի «Ուիլյամ Մերբերին ընդդեմ Մեդիսոնի» հանրահայտ որոշմամբ): Այս առիթով ԱՄՆ գերագույն դատարանի անդամներից Օլիվեր Հոլմսը (պաշտոնավարել է 1902-1932թթ.) խորիմաստորեն նկատել է. «Ես չեմ կարծում, թե Միացյալ Նահանգների վերջը կգա, եթե մենք (*նկատի է ունեցել Գերագույն դատարանին հեղ.*) կորցնենք Կոնգրեսի ակտերը անվավեր հայտարարելու մեր լիազորությունը... Ես կարծում եմ՝ Միությունը կվտանգվի, եթե մենք չկարողանանք այդ հայտարարությունը անել որոշ նահանգների օրենքների նկատմամբ»:

Եվ իրոք, Միացյալ Նահանգների դատական համակարգի արդյունավետ գործունեության համար ի սկզբանե չափազանց կենսական է եղել հատկապես ֆեդերալ Գերագույն դատարան (ֆեդերալ ստորադաս դատարաններ) - նահանգային դատարաններ ուղղահայաց կապը, որը առաջին հերթին արտահայտվել է առաջինի (առաջինների) կողմից դատաիրավակիրառական նահանգային մակարդակի գործընթացի վրա ազդելու իրավազորության մեջ:

Չնայած անհրաժեշտ է նաև նշել, որ իր ծագման ամենավաղ

շրջանում ԱՄՆ-ի ֆեդերալ դատական համակարգը գործնականում ամենահին էլ իշխանության հզոր թև չի համարվել: Նույնիսկ Նախագահ Ջորջ Վաշինգտոնի համար դյուրին չէր ընտրել Գերագույն դատարանի անդամների թեկնածուներ և հետագայում համոզել նրանց չհրաժարվել իրենց գրաված պաշտոնից: Այսպես, Գերագույն դատարանի, որպես դատական բարձրագույն իշխանությունը կրողի, ոչ ծանրակշիռ լինելու և ոչ արդյունավետ գործելու պատճառաբանությամբ, 1795 թվականին իր գրաված պաշտոնից հրաժարվեց ԱՄՆ Գերագույն դատարանի առաջին Նախագահ Ջոն Լեյթը, ճանաչված որոշ պետական գործիչներ նույնիսկ հրաժարվեցին Գերագույն դատարանի նախագահի կամ անդամի պաշտոն ստանձնելուց: 1800 թվականին իր գրաված պաշտոնից հրաժարվեց նաև Գերագույն դատարանի երկրորդ նախագահ Օլիվեր Էլսվորթը: Եվ միայն սկսած 1801 թվականից, երբ Նախագահ Ջոն Ադամսը Գերագույն դատարանի նախագահ նշանակեց համոզված ֆեդերալիստ Ջոն Մարշալին, ինչպես Գերագույն դատարանը, այնպես էլ դատական ողջ համակարգը վերածնունդ ապրեց:

Հաջորդ կարևորագույն իրավական փաստաթուղթը, որը նշանավորեց Միացյալ Նահանգների դատական համակարգի զարգացման հերթական փուլը, դա Կոնգրեսի կողմից 1891 թվականին ընդունված Դատական ակտն էր, որը Նախագահ Բենիամին Հարիսոնի կողմից ստորագրվեց մարտի 3-ին: Ստեղծվեցին վճռաբեկ ատյանի ֆեդերալ դատարաններ (ակտի 2-րդ բաժին) և դրանով իսկ ֆեդերալ

շրջանային դատարանները մշտապես ստանձնեցին առաջին ատյանին հատուկ իրենց գործառույթները, իսկ Գերագույն դատարանը աստիճանաբար սկսեց վերածվել քաղաքականություն կերտող, պետության ներքին քաղաքական կյանքի վրա ներազդող կառույցի՝ ինչպիսին ներկայումս է:

Ամերիկյան ֆեդերալ դատական համակարգի և վերջինիս հատկապես վճռաբեկ մակարդակի էլ ավելի զարգացման ու կատարելագործման հզոր ազդակ հանդիսացավ 1925 թվականին Կոնգրեսի ընդունած և Միացյալ Նահանգների Նախագահ Քեյվին Բուլիջի կողմից փետրվարի 13-ին ստորագրված Դատական ակտը: Եվ ինչպես ակտի վերնագրում էր նշված, այն կոչված էր էլ ավելի որոշարկելու օկրուգային վճռաբեկ դատարանների և Գերագույն դատարանի լիազորությունները: Փաստորեն ընդարձակվեցին ֆեդերալ օկրուգային վճռաբեկ դատարանների լիազորությունները գործով վերջնական որոշում կայացնելու հարցում և համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարվեցին ֆեդերալ դատական օրենսգրքում: Գերագույն դատարանը նախկինի պես վերաքննելու էր ֆեդերալ օրենքները անվավեր ճանաչելու վերաբերյալ նահանգային դատարանների և նահանգային օրենքները հակասահմանադրական ճանաչելու վերաբերյալ ֆեդերալ դատարանների որոշումները, իսկ մնացած դեպքում Գերագույն դատարանին իրավունք էր վերապահվում կատարել ընտրություն: Այստեղ կյանքի կոչվեց «չորսի կանոնը», որի համաձայն, Գերագույն դատարանի առնվազն չորս անդամի համաձայ-

նությունն էր պահանջվում ընտրության սկզբունքով քննության ընդունել իրեն ընդդատյա որևէ գործ: Եվ ըստ էության դա հնարավորություն տվեց Գերագույն դատարանին այսուհետ գործել ավելի կշռադատ, քննության ընդունել ֆեդերալ նշանակության առավել կարևոր գործեր, իսկ դրանց վերաբերյալ կայացրած որոշումներով կամխորոշել ԱՄՆ-ում իրականացվող դատաիրավակիրառական քաղաքականությունը և, ի վերջո, կարևորագույն տեղերից մեկը զբաղեցնել ընդհանրապես պետական քաղաքականության իրականացման ոլորտում:

Հարկ է նշել, որ Միացյալ Նահանգների դատական համակարգի, որպես նահանգային և ֆեդերալ դատարանների ամուր և շաղկապված համակցության, սահմանադրական ձևավորման անհրաժեշտությունը հստակ հիմնավորված է եղել Սահմանադրության կերտողների կողմից: Դա թելադրված է պատմական անհրաժեշտությամբ: Ամերիկյան հեղափոխության նպատակը ազատությունն էր: Ավելի խրթին կամ միանգամայն այլ նպատակներ էր հետապնդում: 1789 թվականի ֆրանսիական հեղափոխությունը, որը նպատակ՝ ուներ ապահովել ոչ միայն ազատություն, այլև հաստատել, «հավասարություն և եղբայրություն»: Ռուսական 1917թ. և չինական (1949թ. գազաթեմակետի հասած) հեղափոխությունները հիմնականում հավասարության էին ձգտում և քիչ էին մտահոգված ազատությամբ, ինչպես որ այն հասկանում էին ամերիկացիները: Ամերիկյան գաղութաբանները ձգտում էին ամուր միություն ստեղծելու միջոցով պաշտպանել այն ավանդական ազա-

տությունները, որոնց իրենք հավակնում էին: Այդ ազատությունների թվին էին պատկանում նաև մարդու իրավունքները ոտնձգություններից պաշտպանելու վերաբերյալ գործերը իրապես անկախ, այլ ոչ թե բրիտանական թագավորին ենթակա դատավորների քննությանը հանձնելու իրավունքը: Թերևս անկախ, անկողմնակալ և արդարամիտ դատարաններ ստեղծելու գաղափարը կարևորվում էր նույնքան, որքան ազատության, ժողովրդավարության հաստատման գաղափարներն ընդհանրապես: Մեկնաբանելով ԱՄՆ դատական իշխանության հիմնահարցը, ահա թե ինչ է գրել Միացյալ Նահանգների Սահմանադրության հիմնական կերտողներից Ջեյմս Մեդիսոնը 1787 թվականի հոկտեմբեր ամսից հրատարակվող հռչակավոր «Ֆեդերալիստ» թերթի 10-րդ համարում. «Ոչ մեկին չի կարելի թույլատրել լինելու իր սեփական գործի դատավորը, քանի որ իր շահը անտարակույս կշեղի նրան արդարատությունից և անհավատարմորեն կալլափոխի նրա շիտա-

կությունը... Եվ ի՞նչ են իրենցից ներկայացնում օրենսդիրների տարբեր խմբերը, եթե ոչ իրենց որոշումներում շահագրգռված կուսակցություններ և փաստաբաններ: Արդյո՞ք օրենքը վերաբերում է մասնավոր պահանջներին միայն: Դա մի հարց է, որի մի կողմում գտնվում են պարտատերերը, մյուսում՝ պարտապանները: Արդարադատությունը պետք է հավասարակշռություն պահպանի նրանց միջև»:

Իրոք, հիմնավոր և համոզիչ են Մեդիսոնի գաղափարները արդարադատության և այդ գործում դատարանների անկախ վող դերակատարության վերաբերյալ, գաղափարներ, որոնք իրենց արտացոլումը գտնելով ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ, կանխորոշեցին այդ երկրի դատական համակարգի զարգացման ուղղությունները:

Իսկ որո՞նք էին այդ ուղղությունները: Գլխավորապես դրանք հետևյալն էին. կայացնել հզոր, օրենսդիր և գործադիր իշխանություններից անկախ, սակայն իշխանության այդ թևերի հետ ակտիվ համագործակցող դատական համա-

կարգ, որը Սահմանադրությանը իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ընդմիջտ ստանձնի հասարակական հարաբերությունները կարգավորողի և այդ հարաբերությունների վրա ակտիվ ներազդողի իր դերը, զարգացնել այդ համակարգը միաժամանակ ուղղափայտ (ֆեդերալ) և հորիզոնական (նահանգային) ուղղություններով և այնպես, որ ֆեդերալ և նահանգային դատարանները գործեն առավել ներաշնչակ, Միացյալ Նահանգների Սահմանադրության և ֆեդերալ օրենսդրության գերակայության ճանաչման, դեմոկրատիայի զարգացման, մարդու իրավունքների ու ազատությունների համակողմանի պաշտպանության, հասարակական և պետական մյուս կառուցվածքներին աջակցելու, ինքնամաքրման և ինքնաերաշխավորման մեխանիզմների ստեղծման ու գործադրման սկզբունքներով: Եվ միանշանակ պետք է ասել, որ իր գոյության 207 տարվա ընթացքում ամերիկյան դատական համակարգը դանդաղ, ինչպես ամե-

ԳԱՏԱԿԱՐԿՈՒՄ
ԽՈՒՂՈՒՄ



ԱՎԵԼԻ ԼԱՎ ՉԵՍ ՄՏԱԾԻ

Թմրանյութերի մաքսանենգները «ապրանքը» սահմանից անցկացնելու շարունակ նորանոր միջոցներ որոնելով, անպատկերացելի հնարամտություն են դրսևորում: Ֆրանսիական մաքսավորների համար, օրինակ, արդեն սովորական է համարվում թմրանյութի հայտնաբերումը հագուստեղենի մեջ և կանացի արդու-զարդերում, մարդկանց ու կենդանիների ստամոքսներում և անզամ դնովի առամներում: Օգտագործվում են անզամ սեփական նորածիճները, օ-

րինակ, կրծքի երեխայի բարուրի մեջ գտնվել է 5 կիլոգրամ կոկաին:

Սակայն հնարամտության բոլոր «ռեկորդները» խփել է այն ճամպրուկը, որն առգրավվել է «Շառլ դը Գոլ» օդանավակայանի մաքսավորների կողմից: Թմրանյութը չէր գտնվում ոչ ճամպրուկի պարունակության մեջ, ոչ էլ նրա կրկնակի պատերի արանքում: Մտահղացման հանճարեղությունը կայանում էր նրանում, որ ամբողջ ճամպրուկն ինքը պատրաստված էր ... 10 կիլոգրամանոց կոկաինի թիթեղներից:

րիկյան Գերագույն դատարանում է խորհրդանշված, կրիայի քայլերով, սակայն վստահ և հավասարի իրավունքով նվաճել է օրենսդիր, գործադիր իշխանությունների կողքին Սահմանադրությանը կանխորոշված իր տեղը, որն ամենևին էլ համեմատելի չէ վաշիճգտոնյան ժամանակաշրջանի ամերիկյան երբեմնի թույլ ու անպաշտպան դատական համակարգին: Ուստի մեծ իմաստ կար ԱՄՆ-ի Սահմանադրության հիմնադիրների այն մտտեցման մեջ, ըստ որի Կոնգրեսին պետք է հնարավորություն տալ քայլ առ քայլ որոշելու Գերագույն դատարանին ստորադաս դատարաններ

րի ստեղծման անհրաժեշտությունը: Այստեղ նրանք իրավացիորեն վճռորոշ նշանակություն էին տալիս ժամանակի իմաստության գաղափարին, քանի որ դատական իշխանություն մի ակնթարթում ստեղծվել չէր կարող, դեռևս նոր էր ձևավորված Միությունը և նոր էին կայունացրել կենտրոն-նահանգներ հարաբերությունները: Ի վերջո, դեռևս նոր էին արվում պետականության հաստատման և ամերիկյան միասնական ազգի ձևավորման առաջին քայլերը: Ամփոփելով նշենք, որ յուրաքանչյուր պետության դատարանական համակարգն

ուսումնասիրելիս խիստ կարևոր է դրա ծագման և զարգացման պատմությանը ծանոթանալը, քանի որ, ինչպես վերը համոզվեցինք, պատմությունն է իմաստավորում ներկան: Ուստի, մեր կարծիքով, Հայաստանի Հանրապետության դատարանական համակարգի վերակառուցման ներկա ժամանակաշրջանում պետք է կարևորվի ինչպես հայոց պետության և իրավունքի, այնպես էլ պատմական փորձությունները հաղթահարած և ժողովրդավարության հաղթանակը վայելող պետությունների համանման համակարգերի ստեղծման ու զարգացման խորացված ուսումնասիրումը:

ՀԱՐՑ - Ինչպե՞ս կազմել հայցադիմում՝ ամուսնալուծության պահանջով:

ՊԱՏԱՍԽԱՆ - Ցանկացած հայցադիմում պետք է հասցեագրված լինի դատարանին, այնուհետև պետք է նշվի, թե ով է հայցվորը և նրա հասցեն, ապա՝ պատասխանողը և նրա հասցեն:

Ապա գրվում է «հայցադիմում» բառը, որից հետո փակագծում գրվում է, թե ինչի՞ մասին է այն:


Այնուհետև գրվում է բուն հայցապահանջի բովանդակությունը:

Ամուսնալուծության հայցադիմումի մեջ պետք է նշվի, թե երբ են ամուսնացել, ամուսնության գրանցման ո՞ր մարմնում և երբ են գրանցվել: Որտե՞ղ են ապրել, համատեղ կյանք վարե՞լ են, թե՞ ոչ: Նշվում է, թե համատեղ կյանքի ընթացքում երեխաներ ունեցե՞լ են. եթե այո՝ գրվում են նրանց անունները, ծնվելու ժամանակը, որտեղ են գտնվում երեխաները:

Այնուհետև պարտադիր պետք է նշվեն ամուսնալուծության դրդապատճառները: Դա պետք է հիմնավորվի: Ապա նշվում է, որ այդ պատճառով նրանց համատեղ կյանքը և իրենց ընտանիքի գոյությունը դարձել են անհնարին, ուստի խնդրվում է ապահարգանի թույլտվություն տալ:

Հայցվոր ամուսինը կարող է նույն հայցադիմումի մեջ նշել, որ իրենց ամուսնալուծելու թույլտվություն տալու դեպքում խնդրում է իրենց երեխաների խնամքը և դաստիարա-

**Մեր
խորհրդատվությունը**



կությունը հանձնել իրեն, իսկ մյուս ծնողից զանձել այնպես՝ այդ երեխայի ապրուստն ապահովելու համար:

Հայցադիմումի մեջ կարելի է գրել նաև ամուսնական համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված ընդհանուր գույքը բաժանելու պահանջի, ինչպես և՛ անաշխատունակ ու կարիքավոր հայցվորի օգտին ապրուստի միջոց բռնագանձելու մասին:

Այդ բոլորից հետո, պետք է՝ նաև գրել, թե ինչպիսի փաստաթղթեր են կցվում հայցադիմումին (ամուսնության վկայականի, երեխաների ծննդյան վկայականների կրկնօրինակները, տեղեկանքներ երեխաների գտնվելու տեղի մասին, երբեմն էլ՝ տեղեկանքներ առողջական վիճակի, նյութական դրության և այլնի մասին՝ ըստ անհրաժեշտության: Բոլոր փաստաթղթերը ներկայացվում են մեկական օրինակից, իսկ հայցադիմումը՝ երկու օրինակից:

Վերջապես, հայցադիմումի հետ պետք է ներկայացնել անդորրագիր՝ ամուսնալուծության համար սահմանված պետական տուրքի գումարը մուծելու մասին: Ներկայումս այն հավասար է երեք հազար դրամի:

Հայցադիմումը կարելի է ներկայացնել ինչպես ձեռագիր, այնպես էլ մեքենագիր վիճակում:

ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՄՆ-ՈՒՄ **23**